

ԲԱԺԱՆՈՐԴԱԿ ԲՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հասարակարհային 10 ֆրանկ. վերահսկողական 5 ֆրանկ. Արսասահմանի հասարակարհային 12 ֆրանկ. վերահսկողական 6 ֆր.

ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Կրտսիւնի և 16 ֆրանկ:

Կանոնադրական տար 20 սանթիմ և:

ՇԱՐՇՈՒՄ

Նախկին և նորագոյն
Խմբագրութեան հասցիքն.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅԻՆՈՒ ՉՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
Адвокатъ

ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ

—(—)

Անցեալ օր մեր գիտողութիւններ երիտասարդութեան ուղղած էինք, հրաւիրելով զայն չթերանալ իր բարձր կոչումին մէջ, թոյլ չտալ որ շահախնդիրներ, ազգադաւաններ իրենց շահատակութեանց ասպարէզ գտնեն մեր ազգային կեանքի մէջ:

Այսօր, այս նուիրական օրերու տպաւորութեան ներքեւ, մեր խօսքը հայ տիկիններուն պիտի ուղղենք:

Մեր փափագը չէ, զէթ առ այժմ, հայ իրական սեռը օր Շօփէնի ուղիքին մէջ մտած տեսնել, հաւասար գործակից էրիկ մարդուն, կեանքի պայքարին ամէն աստիճաններուն վրայ և անոր ամէն մրրկատ յորձանքներուն խառնուած:

Հաւատակորդներ չենք անոնց որ կուզեն կիրք իր տանը մէջ տեսնել, թագաւորութեան այդ գողար մանրանկարին խնամքով թաղուհի: Եւ սակայն կենցաղի վրայ այդ ըմբռնումը ունենալով հանդերձ չենք կրնար մեր հիացումները զսպել զէպ անոնք, որ աւելի լայն զգացումներով լեցուած, իրենց սրտերուն մէջ բաւական կորով կը զգան ազգային դատի պաշտպանութեան անհղ կռուին մէջ նետուելու:

Մեր հիացումները նա մանաւանդ այն պատճառով արդարանալի են որովհետեւ աւելի մեծ գիտակցութիւն մը կը նշմարենք վրանին:

Եւ գիտակցութեան բացորոշ ապացոյց մը չէ՞ սա ճշմարտութեան ըմբռնումը թէ Հայրենիքի դատը նոյն իսկ ընտանիքի դատն է և թէ այն տիկինը որ անտարբեր է յեղափոխութեան հանդէպ՝ նոյն իսկ իր մայրական պարտականութեանց մէջ թերացած կըլլայ:

Ասոնք անցողակի ըսելէ ետքը, այս պահուստ և ուղենք աւելի զիրարամտալի խնդրով մը զբաղելու: Ըսել կուզենք թէ ընտանեկան գործերէ դուրս, ամուսնական առաքինութիւններէ դատ, կիր-

ները ուրիշ կոչում մըն ալ ունին, թերեւս ամենէն չքնաղը, որ իրենց մայրական պարտականութեան հետ զուգընթաց է և որուն կիրառութիւնը միայն կիրք իր բարձրութեան մէջ կը պահէ:

Գութն է ատիկա: Ապահով ենք թէ հայ տիկինները նոյնքան զգայուն սիրտ ունին և նոյն իսկ աւելի քան ու է ուրիշ ազգի տիկինները, և սակայն այդ գութը, պէտք է խոստովանել, այնքան պղտորական ձևով արտայայտուած է մինչև երբ, որ շատ մօտիկ է սառն անտարբերութեան:

Հա՞րկ է օրինակներ տալ: Այնքան առատ և յորդ են սր փափկանկատութեան դէմ պիտի ըլլայ այնքան ուժեղ զէնքերով յարձակիլ ակար սեռի մը վրայ:

Գաղթականութեան շրջանին ի՞նչ տխուր տեսարաններ պարզուեցան մեր աչքերուն տակ: Հայ տիկիններ, դեռատի կոյսեր, այրի սցած և որբացած թուրքին պաղանութիւններէն, կողպատուած մինչև անգամ քա՞ր մը չի դանկտու աստիճան իրենց գլխուն տակ՝ անթիթ մնացին, ցնցոտիներով շրջեցան յուսահատ և ուժապառ: Թարմ սուղ գերու յիշատակով դառնացած, սիրելի անձերու արիւնոտ դիակները միշտ աչքերուն դիմաց, զարհուրելի միճաւանջներու ենթակայ՝ փողոցը մնացին...

Ըսէք, խնդրեմ, որ հայ տիկինը ելաւ եղբայրական, մայրական ձեռք մը կարկառել իր թշուառ քոյրերուն, որ տիկինը շրջեցաւ այն թշուառութեան խորշերը ու հայ տիկինը, երբեմն ինք ալ իր տան թագուհին, կողբա՞ր իր սեւ օրերուն վրայ:

Ատիկա գառն ճշմարտութիւն է, բայց չխոստովանելու ճարը չի կայ: Ազգային տաղնապին մէջ հայ տիկինները պարտազանց գտնուեցան: Փոխանակ գթութեան գործը իրենք ստանձնելու և միթիթորիչ հրեշտակներու պէս սլանալու հոն ուր այնքան արցունքներ կային սրբելու, այդ գերազանցապէս վեհ գործը

չատ հեղ թողուցին աննշան և անձեռնհաս տարբերու ձեռքը:

Ի՞նչ ձախող գաղափար: Այսպիսի փափուկ գործ մը վտառհիլ այրերու—որոնցմէ ամէնէն բարեկիրթն իսկ կոչուութեան հետք մը կուենայ նկարագրին մէջ— և թշուառ հայուհին անհեղի կիրպով վերադարձել իր արժանապատուութեան մէջ:

Եւ սակայն բարի գործ մը կատարելու համար երբեք ժամանակը անցած չըլլար, վասն զի թշուառութիւնը որքան ատեն որ աշխարհի մէջ մնայ— և մօտեցաւ վերնալու միտք չունի— անոր անթիթ գոհերը միշտ պէտք պիտի ունենան ճշմարիտ և փափկանկատ բարեգործութեան:

Թող հայ տիկինները իրենց աչքին առջեւ ունենան «պաղատ տըլա շաւթէ» ի մարտիրոսուհիները, ամէն երկիրներու մէջ տիկինաց նուիրած մեծ աջակցութիւնը բարեգործութեան, հակառակ այնքան պիտական հաստատութիւններու դոյս թեան յիշե՞ն այն անձնուէր գործունէութիւնը որ կը տիրէ ամէն տեղ երբ Հայրենիք ու ազգ վերանցի մէջ ինչ, և ետքը խորհին թէ ներքի՞ է իրենց «երջանիկ հայուհիներու» ընտանեկան նեղ շրջանակի մէջ պարտականութեան մնալով, մոռնալ այրի, որը և Հայրենիք...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փիլիպե, 28 Մարտ

Յետադիմութիւնը անօժիտ յաջողութիւն մը ունեցաւ Փ. Պօլսի մէջ: Այդ յաջողութեան համար ամէն տեսակ տարրին միջոցներ գործածել չը խնայեց: Սպառնական նամակներ, բէլլիւլէր, ձեռք, ոստիկան և մատնութիւն իր սովորական զէնքերը դարձան: Մինչև իսկ քաղաքի մտաւորական և նվթական ուժը կազմող անձերն ամբաստանեց կատաղութեան լրբ անհաւատարիմ իրենց պատօնին: Բայց երբ տեսնուած է որ յետադիմութիւնը ազնիւ զէնքերով կուրի աշխարհի մէկ անկիւնին մէջ: Տարբերութիւնը սա էր որ հոս թրքացած բարեկրու հետեւանքով յետադիմական մեթոտները աւելի վայրենի հանգամանք ունէին:

Վարիչ ժողովը չը կրցաւ տոկալ այս հայածանքին և հրաժարեցաւ:

Այս դերին մէջ ամենէն աւելի փայլեցան սեղիս քահանաները որք պատիւ կը բերեն իրենց դատարարին: Հաճոյքի և հեշտութեան մարմնացումներ, բազուի և մամոնայի խնկարկուներ, չէին կրնար թողուլ որ բարեկարգութիւն դարձը և ազգային շրջանակները: Ազատական վարչութեան մը տակ իրենց շահատակութեանց աղբիւրը կը ցամքէր: Դպրոցական պաշտօնէութիւնն ալ վար չը մնաց անոնցմէ: Յետադիմութեան սիրահար այս պարտները պատառ մը հացի համար ամէն տեսակ խոտովութիւններ արտադրեցին, որպէս զի դպրոցական խնդիրը գոցուի: Թէև իրենց կեանքին մէջ յեղափոխութեան անունը յիշած չէին աշակերտներուն, ջերմ յեղափոխականներ դարձան և կազմակերպութեանց ձեռնարկեցին: Եւ հեղուութիւնը կատարելութեան հասցնելու համար, բարոյականի խնդիրներ յարուցին, ողորմելի բնթացաւարներու փառասիրութեան կոչում բրին և դանոնք յետադիմութեան գերիզնականցին: Անորոշ ուղղութեան տէր մեծ—ազաններն ալ ամէն տեսակ միջոցներու յանձնառու եղան իրենց պատուարներ և շահաբեր դիրքերը չը կորսնցնելու համար: Արատներով ծածկուած անձեր պաշտօնի գլուխ անցուցին: Բայց կարգ մը յեղափոխական անուանուած անձերն ալ որք ամէն գոյնի և ձեռի տակ կը ներկայանան, և որք հինգ ֆրանգի համար չէ թէ հայրենիքը, այլ ամբողջ աշխարհը ծախելու պատրաստ են, կարծես գաղտնի հրամանէ մը զրդուած յետադիմականներու գօրատիկ եղան: Թրքացած տարրին ամենէն ջերմ պաշտպանները և արքանեակները դարձան: Յեղափոխութեան անունը ջանացին զգուելի բնէլ քաղաքիս մէջ: Բայց պարագայ տեղը կաշխատին: Ժամանակին ոգին թափանցած է ժողովրդային ամէն խաւերուն մէջ: Յետադիմութեան վերջնական յաղթանակը պիտի գայ ու չկամ կանուելու:

Այս շփոթութեանց մէջ կայ ուրիշ հետաքրքրաշարժ պարագայ մը որ կազմէ իմ վրայ խորապէս: Արսէն վարդապետի վախճան վարկն է Փ. Պօլսի մէջ: Կաթողիկոսական խեղճ պատգամաւորը, որ Այցելու հովիտ տղոցը կը կրէ, որչա՞փ ջանաց որ գայ հոս: Իր սակաւաթիւ հետեւողներուն նամակներ գրեց որպէս զի գայ և կարգադրէ ազգային գործերը: Անշուշտ իր պարտականութիւնն էր այսպիսի սագնապալի ժամանակ մը

իր ներկայութեամբ քննել ամէն ինչ
և գործան տանէր ներկայ չփոխու-
թեանց և թէ՛ այդ չէ իր պաշտօն , իր
գոյութեան պատճառը վերցած կըլ-
լայ : Բայց ճ. մարտի թիւը սա էր
թէ երկու կողմն ալ աշխատեցան որ
այդ փորձանքը պակաս ըլլայ փ. Պոլ-
սէն : Իր նախկին այցելութեան համը
տակաւն ամէնուն բերանն էր : Մէկ
երկու կողմը գործընթացը զատ ոչ ոքի
կըցաւ համակրութիւն ներշնչել :
Ժողովրդային ամէն զտասարգերու
մէջ խոսովութիւն և հակառակութիւն
սերմանաց : Ուզեց իր «Ն» հաստա-
տել ամէն տեղ . և կըցաւ միայն
Արսէնեան սակաւթիւ խմբակ մը
հաստատել : փ. Պոլսեցին , ինչ գա-
ղափարի ալ պատկանի , որոշեց իր
սահմաններէն հետեւ պահել այդ վար-
պակեալը , և գէթ այս պարագային
բացարձակ իրաւունք ունի :

Գաղափարաւոր մէկ քանի որ տ-
առջ հրաւիրեց բաւական թիւով հայ
կարեւոր անձեր և անոնց յայտնեց
թէ նախարարութեան լուր արուած
ըլլալով թէ զարթոնականներ և օտա-
րականներ կը խոսնուին ազգային
գործերու և խոսովութիւններ կը
յարուստեն , ինչպէս ուրիշ ճեղեր
նոյնպէս փ. Պոլսի մէջ , խնդրեց որ
այսուհետեւ այդպիսի ընթացքներու
մէջ չը գտնուին : Յայտնեց թէ մեծ-
աղանքը որք հոն ներկայ էին և
հրաժարուած հոգարարութիւնը որ
նոյնպէս հրաւիրուած էր , պիտի շա-
րունակեն իրենց գործերը : Յատաջ-
ղիմականներէն ճիար Թամիրեանց
յանուն իր բարեկամներուն Չերմա-
պէս բողոքեց թէ խոսովութիւններ
յարուցած ըլլան , կամ թէ ազգային
գործերու խոսնուած ըլլան ապօրինի
եղանակներով : Եթէ «այդ լրատու-
ները ոչ թէ հայի , այլ գնչուի ա-
րին իսկ» ունենային չէին «տոր-
նանար այդպիսի զրպարտութիւններ
ընելու : Ճառ խօսողը , նախատողը ,
բեղովիլը արձակողը , սուրբ գործա-
ծողը բոլորն ալ տեղացի պուրկարա-
հատակ անձեր են : Եթէ օտարա-
կանները ուզեր են իրենց կարողու-
թեան համեմատ օգնել ազգային գոր-
ծերուն , առիկայ պարզապէս իրենց
ընդհանուր ժողովին որչա՞նք մը էր :
Տպուած հեռագիրներ զրկած էր աւա-
զերեց քահանան :

Այս ստորութիւն շատ գեշ ազ-
գած է մեր հարուստ , խորհող և
զարգացած շրջանակներու վրայ : Ո-
րոշած են կտրել ամէն նիւթական
և քաղաքական օգնութիւն : Կրօնա-
սան որ ահագին զարգացած գտա-
կարգը ինք զգայ իր վիճակին ծան-
րութիւնը և հարուստը տայ իր ջոջ
աղաներուն :

Բայց շատ դժուար պիտի ըլլայ
թողուլ ամէն ինչ : Անկարելի է որ
զգայուն հայ մը խորապէս չզգայ այն
անպիսի փաստը որ կը կրէ փ. Պոլսի
հայութիւնը : Պարահանդէսի հասոյ-
թը փոխանակ գործածուելու ազգա-
յին կարուածները գրաւեց ազատելու ,
գործածուած է զատուաներուն յետ-
նած ամուսնանները վճարելու հա-
մար : Բացարձակ է անխիղճանու-
թիւնը : Անկարողութիւնը և շա-
րակամութիւնը հասած են իրենց
զարգաթիւնակներն : Գաղափար մը տա-
լու համար սիրող ազատութեան ,
պատմիմ միայն սա փոքրիկ գէպը :
Ժամանակէ մը հետէ ընդհանուր
զարգափար մը տարածուած էր թէ ազ-
գային բոլոր պաշտօնականներն ալ ան-
վստահելի էին : Վարիչ ժողովին մէկ
անդամը հնամաք քրտի ըլլալով ջախ-

ջախիչ ապացոյցներ ձեռք կը բերէ
անհաստատութեան : Կուզէ ժամ-
կուշէն և կտրել : Օր մը հրապարակաւ կը
յայտնէ աւագերեց քահանային թէ
ժամկոչը անհաստատութիւն է և թէ
պէտք է անմիջական միջոցներ ձեռք
ստանել ապագային մեծ կորուստնե-
րու տեղի չտալու համար :

—Այո՛ , կը պատասխանէ քահա-
նան , մենք ալ գիտենք անոր ան-
հաստատութիւնը : Եկեղեցիին իւզը
ամէն օր տուն կը փոխադրէր :
Իւզին մէջ կազ խոսնեցինք , որ-
պէս զի այդ անհաստատութեան
ստիւգը տանենք :

—Առիկայ գէշ չէք մտածեր , կը
պատասխանէ մեր յարգելի բարե-
կամը , բայց աւելի լաւ չըլլար ան-
միջապէս օձիքէն բռնել և զանիկայ
դուրս նետել եկեղեցիէն :

—Զըլլար , զուտկս , չըլլար :
Այո՛ , տեր պապա , գիտենք թէ չըլ-
լար . գիտենք նաեւ թէ ինչո՞ւ հա-
մար չըլլար :

Թղթակից

ՀԱՅՐԵՆԻՒՄԻ ՅԻՆԱՍԱԿՆԵՐ

—(—)

Ու երբ երեսուցեանց Պօլս կը դի-
րայադանան արիւն Սիման Ար-
թօն , այս անգամ զարգացողային
հակասութիւն մըն է որ կը սրտի-
կայ . մայրը կուզէ որ օր օր տառ
Արթօն հետեւ անո՞ւ հայրենիք մեկ-
նի ու այն ատեն , իրենց զեղի մէջ ,
իրենց հայրենական օճախը չէն պա-
նէ . . . իսկ սրբին . իր իտէալի տե-
նով յանգուցն ձեռնարկներ կընէ ,
ասպին անդին կ'իյնայ բարեբար մը
գտնելու , ու օր մըն ալ երբ կ'իմա-
նայ որ Խրիստոսն պատրիարք Բերա-
յի երրորդութեան եկեղեցիին դաս-
է , հոն կը գլխէ , եկեղեցիին դուռը
խեղձ և մը կ'իջարած կըտարած մինչ
Պատրիարքի ելնելը , որպէս զի իր
փափաքները բերանացի յայտնէ . . .
վերջապէս եկեղեցիին և քա Ս. Հայ-
րիկը , Տիգրան էֆ. Կիւմիւշէկէյտանի
հետ գուրաթի գուռնէն ուք գուրս կո-
կած պահուն , Արթօն իր պաղարիւ-
նութիւնը կը հաւաքէ , ու պատրի-
արքի ձեռքը բռնած համարելով ,
սրտի փղձկութեան կըսուի լալ , ու
արտասուենքով իր տենչ կը բացառ-
րէ , ուսման մասին իր անհուն ծա-
րարը կը յայտնէ : Հայրիկը , իր բա-
րի կամեցողութեան քաղցր շնորհով՝
Տիգրան էֆ. Կիւմիւշէկէյտանի կըսէ
«անձ քեզի ալ ժամի որդեկիր մը»
ու այդ բարեբար մարդը , անմիջա-
պէս «չտա լաւ» կըսէ , ու յետոյ Ար-
թօնին դառնալով . «հոգ մի բնիք ,
սողա , աչս վայրկեանէն սկսեալ յու-
րոլոր պէտքերդ հոգալ ու քեզ քու
նպատակին հանցներ իմ պարտքս է»
կըսէ , «այլ ևս , իբր մեր տան տղան
ազատ ևս մեր տուն մուտ ու ել գոր-
ծել :» Երբ այս միջադէպ տեղի կու-
նենար , երբ Արթօն իր ապագայ վե-
ճակի սահմանը կը գծէր , իր մայրը
բողբովին անգիտակ այս ամէնուն ,
մտովի միշտ Արթօնի հետ դէպի
հայրենիք , դէպի «Խուրթիկ» սի-
րուն լեռներ և գեղեցիկ հովիտները
կը թռչէր . . . ու երբ իրիկունը Ար-
թօն իր մօր քով գտնուելով , անցած
զարձածը կը պատմէ , մայրը իր ծրա-
գրի ոչնչացումը այն ատեն կզգայ :
Քանի մը ամիսներ Տիգրան էֆ. Կիւ-
միւշէկէյտանի պաշտպանութեամբ Ար-
թօն կը շարունակէ հանգուցեալ
«Նարեկեան» վարժարանը երթալ .
այդ ժամանակին էր որ Արթօնի ժա-
ռանգաւորներու վարժարանին գարկ
մը տարով , գաւառացի ու Պոլսեցի
ուշիմ ու ընդունակ սաներով ուզե-

ցին արդիւնաւորել այդ ջանքերը ,
Արթօն ալ իր բարեբար պաշտպա-
նութեամբ ու ծախքով Արթօնի վար-
ժարանը կը խրկուի , իր գծախա-
մօրմէն զազուուկ :

Արթօնի այդ միջոցի սաներէն ա-
մենէն ուշիմ ու ամենէն աշխատա-
սէրը կը հանգիտանայ , գաղղիե-
րէնի ու հին հայրենի մէջ ունեցած
մեծ յատաջղիմութեամբ՝ բոլորի հա-
մակրութիւնը կը գրաւէ : Գործըն-
կենիէ և քա , իր աշխատութիւնները
շարունակելով կուսանի նաեւ անգ-
ղիերէն , գերմաներէն . այդ երեք ազ-
գաց նշանաւոր հեղինակները գոր-
ծերը իմաստասիրած ու հոգեբանա-
կան ու փիլիսոփայական մեծ պաշար
հաւաքած , ընդարձակ գաղափարի ու
տաք սրտի տէր հայրենասէր գաղա-
փարական յեղափոխական մը գար-
ձած էր : Երբ այս ամէն զէպերէն
ու գծաւորութիւններէն Լաք 80
թուականին հայրենիք վերադարձաւ ,
ալ իրը ճշմարիտ մարդ ու իրը զի-
տակից անցեալի , հոգով կը ի-
րէր այն ամէն քարն ու հոգ , այն
ամէն յիշատակներ՝ որ հայրենիքին
կը վերաբերէին ու որոնք մեկ կը
կապէին մեր Ազգային ու նախահայ-
րենի հետ : Այդ տաք սիրտ երիտու-
սարդը՝ որ օտար լեզուներով շատ
գրգռել թղթատած ու եղիչն ծայրէ
ի ծայր գոց ըրած էր , երբէք չէր
հետաքրքրուեր և բողոքական նորոյթ-
ներով հայրենիքի գրոյցները .
հայրենիքի սովորոյթներ և հայրե-
նիքի յիշատակաց բեկորները ամէն
բանէ վեր էին անոր համար : Վանի
քանի անգաւ եր մէկտեղ ծամբորդած
ենք այն կանանչաւէս ու խորիստ
լեռներէն սր , կորուսաց չղթան
կողակեն , ու հայրենասիրական և
անանգուն ապաւորութեան մը տակ՝
երգած ենք միասին «Հայրենիք
Սրբազան , իմ սիրուն աշխարհ ,
Թոշում եմ դէպի քեզ , Հոգովս ան-
գաղար» ու վառ երեւակայութեան
մը ամենէն քաղցր երազներով յա-
փշտակուած՝ այն ամէն անխար-
զախ տեսարաններէն ու բնական գե-
ղեցկութեանէն զոր՝ Հայաստանը ,
մասնաւորապէս Տուրուքիանի զը-
րախտային տեսարանը կը ներկայէ :
Մեր աշխատութիւններ մտաւորական
ու մեր իրիկներ բնական էին , ու այդ
ցանկալի օրերի մէջ , մենք մեկ եր-
ջանկութեան զէնիթը թառած կը
նկատէինք , — որովհետեւ հայրենի-
քի շաւղին վրայ մեծ պարտակա-
նութիւն մը կատարելու կոչուած
էինք :

ՊԵՏ

[Շարունակելի]

ԱՆՉԱԳԱՆԳ ՌՈՒՍՃՈՒՔԷ

—(—)

Փութամ անմիջապէս ըսել թէ
տեղիս ընթերցարանի վարչու-
թեան անգամները շատ յետա-
դէմ մարդիկ են :

Համոզումներուս մէջ հաստատ
մնալով հանդերձ , հաճութեամբ
կը հաղորդեմ ձեզ իրենց վեր-
ջին մէկ ձեռնարկը որով անհու-
նապէս տարբեր ձգտումներ ու
տարբեր ոգեւորութիւն կուզեն
ցոյց տալ հիմա :

Անցեալ հինգշաբթիի դիշեր ,
կորոշեն զստախօսութիւններ
հաստատել զլուսկան , ընկերա-
կան և պատմական նիւթերու
վրայ : Բն կը յայտարարեն ալ թէ
սակից և քա , երիտասարդութեան

աչատ ապարէզ պիտի տան ժա-
մանակակից , յառաջդիմական
ամէն տեսակ գաղափարներու վը-
րայ կարծիք փոխանակելու և ի-
րար զիրար լուսարանելու : Իրաւ
որ անիմանալի զօրութեան մը
մտաւոր կենալու է սո գործին մէջ :
Այն մարդիկը որ երբեմն սաստիկ
զինուած էին խօսքի ու խղճի ա-
զատութեան դէմ , դեռ երէկ և-
րախոյական ապաւնալիքներով
իրենց կանխակալ կարծիքնե-
րուն դէմ ձայն բարձրացնողները
ահարկել կը փորձէին , ու քանի
մը շարժաւառ , արհամարհան-
քով կը մերժէին օղտակար բանի
մը համար իրենց ուղղուած հրա-
ւերը , վերջապէս այն մարդիկը
որ ընթերցարանին բնմը անմա-
շնլի գարձուցած էին անկեղծ ու
աչատ խօսողներու համար , այսօր
մէկէն ի մէկ՝ ողջմտութեան մը
զինակին տակ ջերմապաշտպաններ
կուզեն ներկայանալ ճշմարտու-
թեան և կարծիքի ազատ փոխա-
նակութեան : Զարմանալի չէ՞ . դեռ
քանի մը օրեր առաջ , — հաս-
տատուած իրողութիւններ են
զորս կը թուեմ , — աղաներուն
շուրջը կը դեղերէին : ասոնք և
ամէն տեսակ ապարդիւն խնդիր-
ներով Լուզէին մտքերը պղտու-
րել և անուանարկել բոլոր այն
երկրապարտները զորս՝ անհարկի
ենթադրութիւններով իրենց հա-
կառակորդ կը կարծէին :

Գարձեալ մէկը կամ միւսը
վարկաբեկ ընելու անուրջով ,
աողին անդին , «ընկերվարա-
կան է ան , անաստուած է , ան-
կրօն է» , կը փոխալին , ու այ-
սօր՝ լուսամիտ մարդիկ , ծրա-
գիր կը պատրաստեն «կանանց
խնդիր»ին , « ընկերվարակա-
նութեան» և ուրիշ աւելի յառա-
ջացած գաղափարներու վրայ գա-
ստիստելու առաջադրութեամբ :

Կերևի , տեսակ մը «քրիստո-
նէական վարդապետութիւն» պի-
տի ըլլայ ասոնց քարոզիչքը և ,
աղանջովապէս առաջին աշակեր-
տին պիտի հարցնեն . «հաւատա-
քով ի՞նչ ես» . եթէ ոչ՝ տեղն է
որ իրենց խօսքերը մաքերին
ձգեմ՝ «աղանքը կը վերաուր-
ուին և ընթերցարանը . . . կը
փակուի» . . . » :

Սակայն մեր խոհեմ վարչա-
կանները վերջապէս տեսան որ
իրենց գերբը խախտու է : Կկա-
տեցին որ երիտասարդութիւնը
յալ լրացած իրենց կամայական
ու քմահաճ գործերէն , սկսաւ ,
թէեւ ուշ , անոնց զլուսկալ վար-
տանելու լուրջ ճիգեր ընել .
ուստի՝ մարդեր որտալու և իրենց
պաշտօնին յարատեւութիւնը ա-
պահովելու համար՝ ուղեցին հը-
նարը մը ընել այսպէս , և խո-
շոր ու փայլուն ծրագիրով մը
հրապարակ նետուեցան մէկէն :

Սքանչելապէս գծուած , գեղե-
ցիկ ծրագիրներու գերբնական
ուժին հաւատարմող չիկայ սակայն
հիմա :

է՛ն լաւ ծրագիրն անգամ ան-
յաջողներուն ձեռքն մէջ ան-
պարտաւ կը մնայ միշտ, մինչդեռ
յանպատարաստից ծրագիրով մը
խիտ արեւելի է հասնիլ սխալներ
արդիւնքներու . բառական է որ
զս ծին զեկուփարութիւնը (արող
մարդոց ձեռքին մէջ գտնուի :

Ընթերցատանի վարչութեան
անդամները լրենց այս նոր ձեռ-
նարկին մէջ վհատեցնել չեմ
ցանկար . բայց բարեկամարար
կողմէի քիտել տալ իրենց թէ
ի՛նչ բանի ալ ձեռնարկեն , միս
մինակ սխալ մնան՝ մինչեւ որ
խակապէս չի թողուն իրենց երկ-
դիմի գիրքը :

Ըսած իս ճշմարտութեանը ապա-
ցոյց մըն է հինգշաբթի գիշեր-
ուան ժողովը , ուր գրեթէ ո՛չ ոք
համակերպած էր իրենց հրատե-
րին :

Գրպանը զեղեցիկ ծրագիր մը
պահած ունենալովը միայն ի՛նչ
կընայ ընել , որո՞ւ կընայ դասա-
խօսել այդ վարչութիւնը , քանի
որ ո՛չ մէկ երկրասարգ կը հա-
ւատայ իր անկեղծութեան և քա-
նի որ պատերէն զատ ուրիշ ուն-
կընդիր ու անակից չպիտի ու-
նենայ զրէթէ :

Երիտասարդութեան նպատակը
չէ եղած և չէ բնաւ սկարա-
ցընել վարչութիւնը . ընդհակա-
ռակը , կան այսօրու անկողմա-
կալ երկրասարգներ որոնք կու-
շեն իրենց բոլոր սթով օգնել
վարչութիւնը իր կոչման արծա-
նի վիճակի մը մէջ դեմքու հա-
մար . բառական է որ այդ մարմ-
նի անդամներուն մէջ տեսնեն
կորով , ճշմարիտ ողջմտութիւն և
անաչառութիւն :

Եւ ես կը շարունակեմ յուսալ

որ , վարչութիւնը կընայ՝ հակա-
ռակ իր աննպաստ կողմակեր-
պութեան , իր ծրագիրը գոր-
ծադրել և իր նպատակը իրակա-
նացնել այն «միակ պայմանով»
որ անցեալին մէջ ունեցած սը-
խալները ըմբռնէ , իր մէջէն
զտրո զտարէ ամէն անձնական
փոքրոցի նկատում , ձեռք ձեռքի
տայ կարող երիտասարդներու
հետ և բանիմաց գործունէու-
թեամբ մը անկեղծօրէն ջանայ
իր դէմ՝ եղած զաղափարները
ուղղելու և երիտասարդութեան
համարումն ու փաստութիւնը
գրաւելու :

28 Մարտ

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Մերսինի բողոքականներուն
վարժարանը փակուել է կառա-
վարութեան կողմէ , որովհետեւ
ամերիկեան կառավարութիւնը
իր հպատակներուն կրած փաստ-
ներուն հատուցում պահանջու է :
Չէյթմենի մէջ ամէն օր 40էն
մինչեւ 60 թուրք զինուոր կը
մեռնին հիւանդութիւններէ : Կի-
լիկիա բանասարկուած հայերը ,
28 հոգի , որոնց մէջ նաեւ վաս-
տաբան Պ. Մալեզեան , Մէրսինէն
Բօնեաի ճամբով Էտիրնէ տար-
ուել են :

—Մարտիան , թէեւ հրաժա-
րած Պարսկաստանի հովուութե-
ան , զեւ կը տնտեսայ հոն՝ Կուզէ
Էլմիսիւն չղացած գործ մը տե-
սած ըլլալ : Ամիր՝ իղամը խոս-
տացել է իրեն պաշտօնանկ ընել
Խոյի և Սալմաստի երկու ստիա-
րաստները , որոնց պիտի յա՛որ-
դեն անշուշտ նմանօրինակ երկու

անօրէններ : Նէյբուզի «օնին» ,
Մարտիան , բառ սովորութեան ,
չըներկայունայ զահաժառանգ իշ-
խանին , ուսկից կը խնդրէ աշատ
արձակել տալ Թաւրէշ բանասար-
կուած յիւն հայերը , որոնք իս-
կոյն կարճակուին , ինչպէս նաեւ
օտ . հիւսպատասարանը բանասար-
կուած երկու հայերը : յո՛մ խա-
ղաղութիւն կը տիրէ Սալմաստ և
չըլձականի ըր :

—Լաւնարաի (Կիպրոս) հայկա-
կան որբանոցին տեսչուհի տիկին
Ֆլուարտի դէմ սաստիկ բողոքներ
կան : Այս անգլուհին յե՛ ին ծայր
ամարդութեամբ ու վայրենու-
թեամբ էր վարուել եզեր իր խը-
ճամբին յանձնուած 32 որբուայրի
կիներուն և 110 որբերուն հետ :
Այս որբանոցն հաստատող անգլ-
ընկերութիւնը տնօրինութիւն մը
չէ ըրած ցարգ , կամ խնդրէն
անտեղեկ կամ՝ սխալ տեղեկու-
թիւն առած ըլլալուն . վասն զի
տիկին Ֆլուարտ իրեն շնորհա-
կալութիւն յայտնող հանրագրու-
թիւն մը պատրաստել կուտայ
բռնի : Ետտ՝ մայրեր , սեսչու-
հին անհանգուրծելի ընթաց-
քէն զղուած , կուզեն հեռանալ
Կիպրոսէ , բայց խնդրէր ճամ-
բու ծախքի համար դրամ չու-
նին : Տեսչուհին ոչ թուրքերէն
զիտէ ոչ հայերէն . հէք զուս-
տացի հայուհիները , տիրուած
են թարգմանով խօսիլ այդ ան-
սիրտ անգլուհին հետ : Անցեալ-
ները , որբանոցին կիները ուղ-
ղակի կը բողոքեն Լոնտան՝ իրենց
վիճակին դառնութիւնը բացատ-
րելով : Հեռուանքը դեռ յայտնի
չէ :

—Մոսկուա ընկող կրիտա-
սարգ վաճառական Աւետիս Պօ-

ղոսեան Թիֆլիսի հայոց հրատա-
րակչական ընկերութեան նուի-
րեր է 10,000 բուպլի այն պայ-
մանով որ այդ գումարը գործած-
ուի գրքերու հրատարակութեան ,
իւր ցոյց տուած եղանակով :

—Մոսկուաի Լազարեան ձեմա-
րանը Մանանեանի անուանը յատ-
կացուցել է երկու մրցանակ ,
իւրաքանչիւրը 600 բուպլի գու-
մարով :

—Իս գուլի բոլոր մեծ նաւթա-
հորերը կը վաճառուին անգլիա-
կան ընկերութիւններու : Արդէն
Պ. Մանթաշեան իր հորերը ծա-
խել է 24 միլիոն բուպլի : Եւ
արդարեւ զարմանալի կըլլար ե-
թէ Ալպիոնի անյագ զաւկները
այս հորերուն մէջ ալ չխօթէին
իրենց քիթը :

—Պ. Արշակ Զօպանեան «Հան-
գէս Ամսօրեայ»-ին մէջ կը գրէ .
«Կեդրոնական վարժարանի նախ-
կին աշակերտներէն և բարե-
կամներէն մէկը՝ Երուանդ Մա-
նուէլեան , որ Մաթիաս Տիւվալ
երեւելի գիտնականին աշխատա-
նոցին մէջ կաշխատէր , հիւս-
ուածաբանական այնպիսի կարե-
ւոր փորձեր և գիտեր ըրաւ , որ
իւ վարպետը զանոնք հիացմամբ
զնահատեց և իր «Պաքիւթէ տը
Մէտրին»-ի մէջ տարեկան դաս-
ընթացքին վեջին դասը գրեթէ
ամբողջապէս յասկացուց Մա-
նուէլեանի գիւտերուն ուսումնա-
սիրութեանը : «Ռեզիւ Սիանթի-
ֆիք»-ի վերջընթեր թիւին մէջ
Պ. Տիւվալի դասախօսութիւնը
հրատարակուած է ամբողջ . . .
Երուանդ Մանուէլեան շատ մեծ
գիտնական մը ըլլալու կոչուած
է , և մեր ազգին պատիւ կը բե-
րէ :

—(—)

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (11)

Վերջապէս մենք հասանք այն
գրանը , որը , բառ պատմութեան
բացել էր հայ մատենիչը թշնամիների
ատաջ : Իմ երեւակայութիւնս այդ-
տեղ բողոքովն բորբոքվեցաւ . ինձ
թվաց որ ձորի մէջ արդէն լսում եմ
թագնված թշնամու շշուկը և իմ
կողքում պահված է այդ վատ հայր
որը անա պատրաստ է պարսպի գուռը
բաց անել թշնամու ատաջ :

Մութն ընկաւ . մենք բոլորս էլ
սրտաբեկ , գրեւորներս խոնարհած ,
վերադարձանք Անիի մէջ նորի շին-
ված սենեակները , որոնցից մէկում
ապրում է միշտ մի ծոյլ ձրիակեր և
աւերակների արժէքը չը հասկացող
վարդապետ ու երկուսն էլ եկող այ-
ցերուների համար :

Այդ գիշերը մենք բոլորս էլ մեր
հասակի և արամադրութիւնների հա-
կառակ , սխուր ու արտում պտակե-
ցիկը քնելու :

Առաւօտեան շուտ վերկացանք և
նորից սկսեցինք շրջել . ամէն ծա-
կուռուկ մտանք , ամենաբարձր տե-
ղերը բարձրացանք մազղիկով :

Ամեն տեղ պատերի վրա կային
գրուածներ գրողների ստորագրու-
թիւններով և ամէն մի գրող արտա-
յայտում էր իր վիշաք . կային և օ-

տարները գրուածներ : Բոլորս այդ
լալկան առջերի տակ կարճ ու ողի-
ւորով երկտողեր գրեցինք : Միայն
մի ոտս գնդապետ կարծեմ գրել էր
մի քանի յուսատու խօսք , որի մի-
ջը այս էր . «Այսպիսի անցեալ ու-
նեցող ազգը երբեք չի կորչի , միայն
պէտք է աշխատել . . . »

Նոյն երեկոցեան Անիից գուրս և
կանք գլխիկոր , սրտաբեկ և մտա-
մտրի : Ես թէ արտուր էի և թէ ու-
րախ . իմ մէջ կատարվում էր կրի-
գիտ , որովհետեւ էր մի գործունէու-
թեան ճանապարհը :

Մէկ մտքով անցնում էր—թող-
նել ամէն բան և անցնել Հայաս-
տան . մէկ էլ մտածում էի—բայց ի՞նչ
կարող եմ անել , ես թոյլ արարածս ,
չա՛տ , չա՛տ մարդ պետք է :

Սակայն , գնալու , աշխատելու
միտքը մեխի պէս ցցվեց ուղեղումս :
Նաւալին այն է որ այդ միտքը ինձ
էլ այնքան խենթ , այնքան տար-
բիտակ և անիրագործելի էր երեւ-
ում , որ ուրիշին ասել չէի համար-
ձակվում : Այնու ամենայնիւ այդ
միտքը դարձաւ իմ շար հրեւտակը ,
ստատանս որ ինձ էլ հանդիստ չէր
տալիս օր և գիշեր : Վերադարձայ
քաղաք , հոգեկան հանգստութիւնս ,
զպրոցական գործերս թօան կորան
իմ խեղճից և մաքրից , սկսեցի յի-
զափոխութեան վերաբերեալ գրքեր

փնտել . գտայ Գարբելթանի փոք-
րիկ կենդանութիւնը և սկսեցի ա-
րագրար լսել , ուղերի երեւակա-
յութեամբ . իրական աշխարհը մո-
տացայ . Հայաստանի մագնիսը ե-
լեկարացրել էր ինձ . . . ձգում էր ,
քաշում էր . . .

Այդ ամառը այդպէս անցկացրի
մեր տանը : Վերջապէս օգոստոսի
վերջերին վերադարձայ Վիսիս , վկա-
յականս ներկայացրի անաչին : Հիմա
էլ այդ պարտնը յայտարարեց որ
յուստօրութեան նախարարի ստա-
ջարկութեամբ հարկատուր են և եր-
կու ուրիշ վկայականներ , մէկը ու-
սկիանութեան , մէկն ալ մեր քաղա-
քային վարչութեան կողմից , մինչեւ
այդ չը ներկայացնեմ չէ կարող ըն-
դունել . իմ հարցին թէ ինչո՞ւ նու-
խորքը չը յայտնեցիք նա պատասխա-
նեց—որովհետեւ այն ժամանակ այդ-
պիսի կարգադրութիւն չէր կար :

Այդտեղ արդէն կատարեցի . գրեթէ
մէկ ամբողջ տարի էր որ այդ պա-
տնը ինձ չարչարում էր յիմար ձե-
տականութիւնների համար :

—Ի՛նչ , միտք բարով , ստացի , եթէ
զուք ամէն մի ուսանողի համար այդ-
պիսի յիմար ձեւականութիւններով
խօչնդոտներ էք բարձրացնում , ու-
րե՛ն չարժէ և ձեր աշակերտը լինել
ստացի և գուրս եկայ :
Գրանից յետոյ վճնեցի տանը պա-

րապել և ամառը քննութիւն տալ
ուսու միտքների աշակերտների հետ :

Ճարեցի դասադրքերը և միշտ յա-
րարեութիւն ունենալով ուսանող-
ների հետ սկսեցի նրանց հետ զուգ-
ընթացաբար դասերս պատրաստել :
Այդ մի կողմից ինձ համար շատ ձե-
ւորնուտ էր , որովհետեւ ուսումնարա-
նի վարձ չէի վճարում , թէ գերծ էի
զսնագան զգալի ծախքերից , որոնք
անխուսափելի են ուսուցիչարանում
եղած միջոցին , և թէ ազատ էի :

Թէ դասերս էի պատրաստում և թէ
կարգում . այս վերջին զբաղմունքս
առաջին տեղն էր բռնել . ախպով ,
վկայական ձեռք բերելու փափագը
կորցրել էր իր ջերմութիւնը . ուղ-
ղակի ուզում էի զարգանալ , միտքս
լուսաւորել և առաջին յարմար
վայրկենին անցնել ճակատասան ,
ճատայել հայկական յեղափոխու-
թեան :

Այդ ձմեռը ծանօթութիւններս ա-
ւելի ընդարձակվեցին—զաղանի ժո-
ղովները շատ կամայ կամաց գտայ և
ինձ համամիտ երիտասարդներ ուղ-
ղակի ճակատասան գնալու : Այդ ժո-
ղովներում մեր խոսակցութեան նիւ-
թը ուղղակի ճակատասան էր , կու-
րբստի մասնավոր թրքահայ ժողովրդի
վիճակը , եթէ յեղափոխութիւնը շուտ
չսկսվէր :

(Շարունակելի)

